01.04.25թ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարգապահական հանձնաժողովը ուսումնասիրության առարկա է դարձնում միայն դիմումատու «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից 14.02.2025 թվականին «ՍԳԿԿ» ԻԿԿ գործադիր մարմնին ներկայացված դիմումը ստորև ներկայացված պատճառաբանությամբ.

Դիմումատուի առաջին բողոքը, որը ներկայացվել է 05.11.2024 թվականին, վերաբերել է սնանկության գործով կառավարչի անգործությանը, որը դրսևորվել է 2024 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին վերջինիս կողմից դիմումատու-ապահովված պահանջով պարտատեր «Յունիբանկ» ԲԲԸ-ի՝ գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքերի իրացմանն ուղղված գործողություններ չկատարելով: Բողոքում ներկայացված նույն հիմքերով ՀՀ սնանկության դատարան է ներկայացվել սնանկության գործով կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ միջնորդություն: ՀՀ Սնանկության դատարանը 02.12.2024 թվականի որոշմամբ մերժել է «Յունիբանկ» ԲԲԸ-ի միջնորդությունը՝ կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ այն հիմնավորմամբ, որ կառավարչի կողմից վերացվել են իրեն վերագրվող անգործությունը, մասնավորապես՝ 28.11.2024 թվականին վերջինս ներկայացրել է միջնորդություն՝ գույքերի աճուրդի ընդհատման վերաբերյալ: ՀՀ Սնանկության դատարանի 05.12.2024 թվականի որոշմամբ, աճուրդի լոտերի շուկայական արժեքի կտրուկ փոփոխությունների հիմնավորմամբ, ընդհատվել է գրավի առարկա հանդիսացող ՀՀ, ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Սեբաստիա փողոց թիվ 5 և ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Սեբաստիա փողոց թիվ 37/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերի աճուրդային վաճառքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից 05.11.2024 թվականին «ՍԳԿԿ» ԻԿԿ ներկայացված բողոքով սնանկության կառավարչի կողմից թույլ տրված անգործությունը վերացել է, որպիսի փաստը ընդունել է նաև պարտատեր «Յունիբանկ» ԲԲԸ-ն, դիմումատուն ներկայացրել է նոր դիմում - բողոք, որով կարգապահական հանձնաժողովին խնդրել է անդրադառնալ կառավարչի կողմից թույլ տված նոր անգործությանը, այն է՝ ՀՀ սնանկության դատարանի կողմից 21.02.2025 թվականին կայացված որոշումից հետո հիշյալ սնանկության գործով անշարժ գույքերի իրացմանն ուղղված որևէ գործողություններ չկատարելուն:

Ներկայացված դիմումում նշված հարցերից հանձանժողովը քննարկման առարկա է դարձնում այն հարցը, արդյո՞ք սնանկության գործով կառավարիչը թիվ ԵԱԴԴ/0090/04/15 սնանկության գործով դրսևորել է անգործություն, կապված նշված սնանկության գործով գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքերի իրացման հետ թե ոչ, եթե այո ապա արդյո՞ք դա հանդիսանում է կառավարչի վարքագծի կանոնագրքի խախտում, որի համար վերջինիս նկատմամբ պետք է կիրառվի կագապահական տույժ:

Ըստ դիմումատուի կողմից ներկայացված դիմումի և առարկության, հրավիրված նիստի ընթացքում ներկայացված բացատրությունների, հայտարարությունների, հարցերի և հարցերի պատասխանների պարզվեց.

Սույն կարգապահական վարույթի ընթացքում հաստատված է համարվում այն հանգամանքը, որ թիվ ԵԱԴԴ/0090/04/15 սնանկության գործով «Մ ԸՆԴ Հ ԿՈՄ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ: Նշված գործով «Յունիբանկ» ԲԲԸ-ն հանդիսանում է ապահովված պարտատեր: Բանկի պահանջը ապահովված է եղել երեք անշարժ գույքերի գրավով, որոնցից մեկ անշարժ գույքը իրացվել է, իսկ երկու անշարժ գույքերի նկատմամբ հրապարակային

սակարկություններով իրացումը դադարել է քաղաքացիական գործերով կիրառված հայցի ապահովման միջոցների և դրանց շրջանակներում տրված կատարողական թերթերի առկայության ուժով: Նշված քաղաքացիական գործերով կայացվել են վերջնական դատական ակտեր, որոնց արդյունքում վերացվել են կիրառված հայցի ապահովման միջոցները և սնանկության գործով կառավարիչը արդեն իսկ 2024 թվականի օգոստոսից կարող էր իրականանցնել գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքերի վերագնահատում և հրապարակային սակարկություններով իրացում: Նշված գործողությունները սնանկության գործով կառավարչի կողմից չեն կատարվել և «Յունիբանկ» ԲԲԸ-ն դիմել է ՀՀ Սնանկության դատարան՝ կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու միջնորդությամբ: ՀՀ Սնանկության դատարանը 02.12.2024 թվականի որոշմամբ մերժել է «Յունիբանկ» ԲԲԸ-ի միջնորդությունը՝ կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ այն հիմնավորմամբ, որ կառավարչի կողմից վերացվել են իրեն վերագրվող անգործությունը, մասնավորապես՝ 28.11.2024 թվականին վերջինս ներկայացրել է միջնորդություն գույքերի աճուրդի ընդհատման վերաբերյալ:

ՀՀ Սնանկության դատարանի 05.12.2024 թվականի որոշմամբ, աճուրդի լոտերի շուկայական արժեքի կտրուկ փոփոխությունների հիմնավորմամբ, ընդհատվել է գրավի առարկա հանդիսացող ՀՀ, ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Սեբաստիա փողոց թիվ 5 և ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Սեբաստիա փողոց թիվ 37/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերի աճուրդային վաճառքը: Դատարանի նշված որոշումը կայացնելուց հետո սնանկության գործով կառավարչի կողմից անշարժ գույքերի նոր գնահատում և դրանից բխող գուքի իրացմանն ուղղված որևէ գործողություն չի կատարվել:

Սնանկության գործով կառավարիչը իր դիրքորոշմամբ նշել է, որ իր կողմից գրավի առարկա հանդիսացող գույքերի իրացմանն ուղղված գործողություն չի կատարվում, քանի որ գրավադրված գույքերը հանդիսանում են երրորդ անձանց սեփականություն և վերջիններս ՀՀ Վարչական դատարանում վիճարկում են նշված երկու անշարժ գույքերի գրավի իրավունքների պետական գրանցումները (թիվ ՎԴ/3182/05/22 և թիվ ՎԴ/5151/05/24 վարչական գործեր): Կառավարիչը նշել է, որ տեղեկացված է, որ ներկայացված հայցերի հիմքում դրվել է 10.11.2021 թ. նոտարի գրությունը այն մասին, որ ք.Երևան, Սեբաստիա փողոցի 37/1 հասցեի 0,12009 հա հողամասը գրավի առարկա չի հանդիսանում: Այնուամենայնիվ, սնանկության գործով կառավարիչը կարգապահական հանձնաժողովի 04.03.2025 թվականին հրավիրված նիստին հայտնեց, որ հրավիրել է պարտատերերի ժողով, որի ժամանակ մտադիր է սնանկության վարույթի բոլոր մասնակիցների հետ մանրամասն քննարկել գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքերի վաճառքի հետ կապված հարցերը:

07.03.2025 թվականին կայացել է թիվ ԵԱԴԴ/0090/04/15 սնանկության գործով պարտապան «Մ ԸՆԴ Հ ԿՈՄ» ՍՊԸ-ի պարտատերերի ժողովը: Ժողովին մասնակցել են պարտատեր «Յունիբանկ» ԲԲԸ-ի ներկայացուցիչ՝ Արամ Կարապետյանը, Լուսինե Եղիազարյանը, երրորդ անձ գրավատու՝ Հրանտ Ալավերդյանը, «Մ ԸՆԴ Հ ԿՈՄ» ՍՊԸ-ի և Հրանտ Ալավերդյանի ներկայացուցիչ՝ Ստեփան Լեփյանը: Ժողովում որպես օրակարգային հարց նշված է եղել «Մ ԸՆԴ Հ ԿՈՄ» ՍՊԸ-ի սնանկության վարույթի հետագա ընթացքի և դրա հետ կապված այլ հարցեր: Լսելով ժողովին մասնակից բոլոր կողմերի բանավոր հայտարարությունները սնանկության գործով կառավարիչը քվերակության է դրել հետևյալ բովանդակությամբ հարցադրումը՝ պարտապան «Մ ԸՆԴ Հ ԿՈՄ» ՍՊԸ-ի վարկային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման համար երրորդ անձ Հրանտ

Ալավերդյանի կողմից «Յունիբանկ» ԲԲԸ-ում գրավադրված՝ ք.Երևան, Սեբաստիա փողոցի 37/1 և ք.Երևան, Սեբաստիա փողոց թիվ 5 հասցեներում գտնվող անշարժ գույքերը մինչև 20.03.2025 թ. ներկայացնել գնահատման և գնահատման եզրակացությունները ստանալուց հետո, սահմանված կարգով անշարժ գույքերը ներկայացնել հրապարակային սակարկություններով վաճառքի: Գնահատման հետ կապված ծախսերը կիրականցնի «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից և «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից առաջարկած ընկերության կողմից: Քվեարկության արդյունքում կողմերը միաձայն ընդունել են վերը նշված օրակարգային հարցը և որոշել պարտապան «Մ ԸՆԴ Հ ԿՈՄ» ՍՊԸ-ի վարկային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման համար երրորդ անձ Հրանտ Ալավերդյանի կողմից «Յունիբանկ» ԲԲԸ-ում գրավադրված՝ ք.Երևան, Սեբաստիա փողոցի 37/1 և ք.Երևան, Սեբաստիա փողոց թիվ 5 հասցեներում գտնվող անշարժ գույքերը մինչև 20.03.2025 թ. ներկայացնել գնահատման և գնահատման եզրակացությունները ստանալուց հետո, սահմանված կարգով անշարժ գույքերը ներկայացնել հրապարակային սակարկություններով վաճառքի:

Այսպիսով, չանդրադառնալով դեռ այն հանգամանքին, թե կառավարիչը հիշյալ սնանկության գործի շրջանակներում թույլ է տվել վարքագծի կանոնների խախտում թե ոչ, նշենք, որ մինչև սույն գործով կարգապահական հանձնաժողովի կողմից հրավիրված նիստերի ավարտը, կառավարիչը իրականացրել է գործողություններ, ուղղված գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքերը վերագնահատելուն և դիմումատուի հետ ձեռք է բերել փոխադարձ համաձայնություն գնահատման եզրակացությունները ստանալուց հետո ներկայացնել աշարժ գույքերը հրապարակային սակարկություններով իրացնելու վերաբերյալ միջնորդություն:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն **պարտապանի գույքի կազմում ներառվում են պարտապանին պատկանող ցանկացած գույքը, ներառյալ՝** մտավոր սեփականության օբյեկտ կամ այլ գույքային իրավունքներ, ինչպես նաև **երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկաները (...)**:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝ **պարտապանի գույքի գնահատումն իրականացնում է կառավարիչը**: Պարտապանի միջոցների հաշվին կառավարիչն իրավունք ունի հրավիրելու անկախ գնահատող պարտապանին պատկանող գույքի գնահատման համար՝ այդ մասին նախօրոք տեղյակ պահելով խորհրդին, իսկ այն ձևավորված չլինելու դեպքում՝ առավել մեծ պահանջներ ունեցող 5 հայտնի պարտատերերին:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **պարտապանին լուծարելու մասին որոշման հրապարակումից հետո կառավարիչը** սույն օրենքով սահմանված կարգով **իրականացնում է պարտապանի գույքի վաճառքը:**

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1-ին և 1.1-րդ մասի համաձայն՝ **պարտապանի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը**՝ իր կողմից գույքագրման արդյունքներով ներկայացված և պարտատերերի խորհրդի, իսկ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում պարտատերերի ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրի համաձայն և դատարանի թույլտվությամբ՝ հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով:

«Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպության Վարքագծի կանոնագրքի 1.1 կետի համաձայն՝ **սնանկության գործով կառավարիչը իր գործունեությունը իրականացնելիս պարտավոր է առաջնորդվել ՀՀ օրենսդրությամբ**, Կանոնագրքի կանոններով և Կազմակեպության ներքին իրավական

փաստաթղթերով, ինչպես նաև պետական լիազոր մարմնի հրամաններով և կանոնակարգերով:

Նույն կանոնագրքի 1.4 կետի համաձայն՝ **սնանկության գործով կառավարիչը պարտավոր է կատարել ՀՀ օրենսդրությամբ և** «Սնանկության մասին» ՀՀ օրենքով կառավարչին առաջադրվող բոլոր պահանջները:

Այսպիսով, ակնհայտ է, որ սնանկության գործով կառավարիչը պարտապանի նկատմամբ լուծարային վարույթ սկսելուց հետո պարտավոր է իրականացնել պարտապանի սնանկության զանգվածում ներառված գույքի վաճառքին ուղղված գործողություններ: Սնանկության գործով կառավարչի կողմից նշված գործողությունները չեն կատարվել թիվ ԵԱԴԴ/4182/02/16 քաղաքացիական գործով կիրառված հայցի ապահովման միջոցի առկայության ուժով: Նշված գործով վերջնական դատական ակտը կայացել է 19.06.2024 թվականին, այսպիսով այս դատական ակտի մասին ծանուցվելուց հետո կառավարիչը պարտավոր էր իրականացնել գույքի վաճառքի գործողություններ, ինչը վերջինիս կողմից չի կատարվել: Այսպիսով, կառավարիչը թույլ է տվել անգործություն, որը վերացրել է 28.11.2024 թվականին ՀՀ սնանկության դատարան ներկայացված միջնորդությամբ, որով խնդրել է ընդհատել նշված գույքերի աճուրդը:

ՀՀ Սնանկության դատարանի 05.12.2024 թվականի որոշմամբ, աճուրդի լոտերի շուկայական արժեքի կտրուկ փոփոխությունների հիմնավորմամբ, ընդհատվել է գրավի առարկա հանդիսացող ՀՀ, ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Սեբաստիա փողոց թիվ 5 և ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Սեբաստիա փողոց թիվ 37/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերի աճուրդային վաճառքը: Նշված որոշումից հետո, մոտ երեք ամիս, սնանկության գործով կառավարիչը չի ձեռնարկել գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքերի վաճառքին ուղղված գործողություններ, այպիսով ևս մեկ անգամ թույլ տալով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի խախտում, որը դրսևորվել է անգործությամբ: Նշված խախտումը «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպության Վարքագծի կանոնագրքի 1.1 և 1.4 կետերի համաձայն հանդիսանում է նար կառավարչի վարքագծի կանոնների խախտում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե՝ **մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելը կառավարիչը վերացրել է կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացած հանգամանքները:**

Այսպիսով, թեպետ սնանկության գործով կառավարիչը ողջամիտ ժամկետում չի սկսել սնանկության զանգվածի մեջ ներառված երրորդ անձանց պատկանող և գրավի առարկա հանդիսացող գույքերի հրապարակային սակարկություններով վաճառելու գործընթացը, դրանով իսկ թույլ է տվել օրենքի և կառաարչի վարքագծի կանոնագրքի խախտում, այնուամենայնիվ, վերջինս մինչև կարգապահական հանձնաժողովի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելը, վերացրել է անգործությունը, հրավիրելով պարտատերերի ժողով, որի արդյունքում, դիմումատուի հետ փոխադարձ համաձայնությամբ, որոշում է կայացվել Մ ԸՆԴ Հ ԿՈՄ» ՍՊԸ-ի վարկային

պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման համար երրորդ անձ Հրանտ Ալավերդյանի կողմից «Յունիբանկ» ԲԲԸ-ում գրավադրված՝ ք.Երևան, Սեբաստիա փողոցի 37/1 և ք.Երևան, Սեբաստիա փողոց թիվ 5 հասցեներում գտնվող անշարժ գույքերը մինչև 20.03.2025 թ. ներկայացնել գնահատման և գնահատման եզրակացությունները ստանալուց հետո, սահմանված կարգով անշարժ գույքերը ներկայացնել հրապարակային սակարկություններով վաճառքի:

Սնանկության գործով կառավարչի թույլ տրված խախտման վերացումը ընդունել է նաև դիմումատու «Յունիբանկ» ԲԲԸ-ն, սակայն խնդրել է կարգապահական հանձնաժողովին անդրադառնալ սնանկության կառավարչի վարքագծին մինչ վերջինիս կողմից պարտատերերի ժողովի հրավիրումը: Գտնում ենք, որ դիմումատուի նման պահանջը հակասում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4-րդ հոդվածի 7-րդ մասին, քանի որ նշված դրույթը հնարավորություն է տալիս սնանկության գործով կառավարչին ուղղել իր կողմից թույլ տրված խախտումները, ինչը հանդիսանում է կարգապահական վարույթ բացառող հանգամանք:

Ելնելով սույն եզրակացության մեջ նշված փաստարկներից և իրավական հիմնավորումներից, կարգապահական հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան

Ա.Մովսիսյան